«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Սովորողների մոտիվացիայի բարձրացումը

Հարցաղրումների մեթոդի միջոցով

Հետազոտող ուսուցիչ՝ **Էլմիրա Նորիկի Սրեյան**

Դպրոց՝ **«Ջանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջն. դպրոց» ՊՈԱԿ**

Մենթոր ուսուցիչ՝ **Արմենուհի Անտոնյան**

ԱՐՄԱՎԻՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____3

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ_____6

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ_____12

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ_____15

5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՈՒՆ_____19

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ_____21

7. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ_____23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արա այսօր այն, ինչ մյուսները չեն ցանկանում անել: Վաղը կապրես այնպես, ինչպես մյուսները չեն կարողանում:

Ջարեդ Լետտո

Ասում են մոտիվացիան երկար չի տևում: Ինչ արած, լոգանքից հետո թարմությունն էլ է օրվա ընթացքում վերանում: Հենց դրա համար էլ այդ մասին պետք է հոգ տանել ամեն օր:

Ամերիկացի հայտնի դերասան և ռեժիսոր Ուիլ Սմիթը, պնդում է, որ մոտիվացիան միակ ճշմարիտ բանալին է՝ հաղթահարելու բոլոր կենսական դժվարությունները: Ոչինչ չի մոտիվացնում ավելի, քան հստակ նպատակը, որին մեզ անհրաժեշտ է ձգտել:

Սովորողների ուսումնական մոտիվացիայի խնդիրը հետաքրքրել է գիտնականներին դեռևս հնուց: Թեման արդիական է և հետազոտական շարունակական աշխատանք է պահանջում: Թեմայի արդիականությունը կապված է նոր կրթական համակարգին հարմարվելու անհրաժեշտության հետ: Սովորելու մոտիվացիան դինամիկ երևույթ է, այն փոխվում է մարդու կյանքի ընթացքում և յուրաքանչյուր տարիքում ունի իր առանձնահատկությունները:

Ուսուցիչները գիտեն, որ աշակերտը չի կարող դասավանդվել, եթե անտարբեր է ուսման և գիտելիքների նկատմամբ, առանց գիտակցելու դրանց կարիքը: Ի±նչ խնդիրներ ունի ներկայիս կրթությունը, ինչի±ն է ձգտում ուսուցիչը, ո±րն է այն գերխնդիրը, որի լուծումը կտա ցանկալի պտուղներ: Ի վերջո, ո±րն է կրթության նպատակը լայն իմաստով և յուրաքանչյուր դասի նպատակը: Ինչպիսի± աշակերտ, մարդ, քաղաքացի ենք ուզում կերտել: Հարցերը շատ են, շփոթեցնող, բայց յուրաքանչյուրս տալիս ենք մեզ այս հարցը և որոնում պատասխաններ:

Ինքն ինձ հաճախ եմ հարցնում՝ գիտե±մ ուր եմ գնում, ի±նչ նպատակի եմ ձգտում դասավանդելիս: Գնահատու±մ եմ առկա խնդիրները և վերլուծու±մ կիրառած մեթոդների ռազմավարությունների արդյունավետությունը:

Դասավանդելով միջնակարդ դպրոցում և աշխատելով տարրական դասարանների աշակերտների հետ՝ նկատում եմ անվիճելի մի իրողություն, որ կրթության մոտիվացիան աշակերտների հասակ առնելու հետ նվազում է, և դա ակնհայտ է հատկապես տղաների միջավայրում:

Մեր ամենամեծ թերությունն այն է, որ մենք չափազանց շուտ ենք հանձնվում:

Հաջողության ամենափորձված ճանապարհը շարունակաբար ևս մեկ անգամ փորձելն է:

Թոմաս Էդիսոն

Աշակերտների համար սովորելու մոտիվացիան շատ կարևոր գործոն է ինչպես ներկայի, այնպես էլ ապագայի հաջողության համար: Շատ հաճախ ինչ-որ բան անելու համար մեզ պակասում է մի կաթիլ մոտիվացիա: Արդյունավետ դասավանդման հիմքում ընկած է սովորողների մոտիվացիան: Անհնար է դասավանդել մի դասարանում, որտեղ սովորողներն անտարբեր են:

Մոտիվացիան կարևոր դեր է խաղում ընդհանուր զարգացման մեջ:

Մոտիվացիա - հաջողության բանալին

- Ես այն չեմ ինչ պատահել է ինձ հետ, ես այն եմ, ինչ որոշել եմ դառնալ:

  Կարլ Յունգ
- Եթե ինչ-որ բան շատ ուզվես, ողջ Տիեզերքը կնպաստի նրան, որ ցանկություն ի կատար ածվի:

  Պաուլո Կոելյու
- Եթե ցանկանում ես հաղթել բոլորին, նախ հաղթիր ինքդ քեզ:

  Դոստոևսկի

Այս հայտնի մտքերը նախանշում են մոտիվացիայի խթանման 3 հիմնական նախապայմանները. ***նպատակը, ցանկությունը, կամքի ուժը:***

Ուսումնառության մեջ մոտիվացիայի բարձրացման կարևոր գործոն են հանդիսանում հարցեր տալու հարցերին պատասխանելու կարողությունը: Այս մեթոդը կիրառվում է սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչ տարբերություն կարող է ունենալ հարցերի միջոցով մոտիվացիայի ձևավորումը, պատմելու միջոցով մոտիվացիայի ձևավորումից:

Հարցադրումների մոտեցման մեջ էական առավելություն կա, և դա այն է, որ այսպիսի դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքները .փոխանցելի են:

Ելնելով իմ առջև դրված խնդիրներից՝ որոշեցի կատարել հետազոտություն և պարզել՝ ինչպես կարող է Հարցադրման մեթոդով ձևավորել մոտիվացիա տարրական դասարաններում սովորող աշակերտների մոտ:

Հետազոտության օբյեկտ՝

- Տարրական դասարանների ուսուցման գործընթացը:

Հետազոտության նպատակը՝

- Ուսուցանվող թեմայի վերաբերյալ ձեևավորել մոտիվացիա և նպաստել ուսումնական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:
- Հարցադրումների մեթոդի միջոցով խթանել աշակերտների մասնակցությունը դասին:

Հետազոտության խնդիրները՝

- Ոսումնասիրել ուսուցման ժամանակակից մոտեցումներից, որոնք կբարձրացնեն աշակերտների մոտիվացիան:
- Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականություն:
- Ուսումնասիրել Հարցադրումների մեթոդի արդյունավետությունը մոտիվացիայի ձևավորման գործում:
- Հաշվի առնել ժամանակակից երեխայի բնավորության գծերը:
- Սովորելու դժվարությունները:
- Ուշադրության պակասը:
- Ներգրավվածությունը դասին:

Հետազոտությունը կատարել եմ 3-րդ դասարանում, որտեղ սովորում են 24 աշակերտներ:

Հետազոտությունն անցկացնելու համար կիրառել եմ Հարցադրման մեթոդը, հայտորոշիչ թեստեր: Ուսումնասիրել եմ գիտամանկավարժական գրականություն և հետազոտվող թեմային վերաբերվող կատարված հետազոտական աշխատանքները և կատարել եմ վերլուծություն:

Գրականության ակնարկ

Մոտիվացիան երևույթների լայն շրջանակի է, որը մարդուն դրդում է գործունեության: «Մոտիվ» բառը լատիներենից է՝ Moveo, այսինքն .շարժվող.: Առաջին անգամ «Մոտիվացիա» բառը օգտագործել է Ա.Շոպենհաուերը, որից հետո այս տերմինը մտել է հոգեբանական առօրյա կյանք՝ բացատրելու մարդու և կենդանիների վարքի պատճառները: Ներկայումս մոտիվացիան՝ որպես հոգեկան երևույթ, մեկնաբանվում է տարբեր ձևերով: Մի դեպքում, որպես գործոնների համախումբ, որոնք աջակցում և առաջնորդում են, այսինքն ՝ որոշում են վարքագիծը /Կ.Մադսեն, Ժ.Գոդֆրուա/, մեկ այլ դեպքում՝ որպեղ շարժառիթների համադրություն /Կ.Կ.Պլատոնով, 1986/, երրորդում ՝ որպես ազդակ, որը հանգեցնում է վարքի ակտիվությանը և որոշում է նրա ուղղվածությունը /7, էջ 65/: Ամենից հաճախ գիտական գրականության մեջ մոտիվացիան համարվում է հոգեբանական պատճառների համադրություն, որով բացատրվում է մարդու վարքագիծը, դրա ծագումը, ուղղվածությունը և գործունեությունը /12, էջ 513/: Սակայն գոյություն ունեն մոտիվացիայի սահմանման մի շարք տարբերակներ, որոնցից և մի քանիսը կներկայացնենք:

Մոտիվացիան մարդու վրա ազդելու գործընթաց է՝ որոշակի դրդապատճառների ակտիվացման միջոցով նրան որոշակի գործողությունների դրդելու համար:

Մոտիվացիան խթան է, որը մեզ ստիպում է գործել: Ա.Մասլոուի մոտիվացիայի տեսությունը որպես առաջատար շարժառիթ, նշում է անհատի շարունակական զարգացման ձգտումը: Նա փորձել է որոշել և դասակարգել մարդկային հիմնական պահանջմունքները և հիերարխիայի տեսքով, որը հաճախ անվանում են Մասլոուի պահանջմունքների բուրգ:



Մոտիվացիան մարդկային հոգեկան կյանքի դրդապատճառային հիմքն է, հոգեբանական պատճառների համադրություն, որոնք որոշում են մարդու վարքի ակտիվությունը(16): Մոտիվացիան որոշակի էներգետիկ համակարգ է, որը ձգտում է լիցքաթափել, բավարարել այն շարժառիթներն ու պահանջմունքները, որոնք կազմում են մոտիվացիայի էությունը /ըստ՝ 3, էջ 337/:

Մեկ այլ մոտեցման համաձայն էլ, որի հեղինակը Է. Լոկն է /1968/՝ մարդու մոտիվացիան որոշվում է նրա նպատակներով և աշխատանքի արդյունքին հասնելու բավարարվածությամբ: Մոտիվացիան ցանկացած գործունեության հիմքն է, այդ թվում՝ կրթական: Վ.Ա.Սուխոմլինսկին ասել է. «Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով ավելի լավ գիտի, թե ինչ է պետք իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»: Հենց կրթական մոտիվացիան է ճանաչողական գործունեության ձևավորման, մտածողության զարգացման, անհատի մասնագիտական հաջող գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման երաշխավորը: Արդյունավետը կրթության, ապա մասնագիտական գործունեության հիմքը այս տեսակի գործունեության համար մոտիվացիայի բարձր մակարդակն է: Իսկ արդյունավետ ուսուցման կարևոր միջոց է արդյունավետ ընթերցանությունը: Սուխոմլինսկին նշում է, որ գիտելիքի իմաստավորման և մոտիվացիայի խթանման հաջողությունը, որքան էլ բխում են տարբեր սկզբունքներից, այդուհանդերձ դրանց փոխկապակցվածությունը իրագործվում է հարցադրումների մեթոդի և զրույցի կիրառումից:

Հոգեբանները խոսելով մոտիվացիայի մասին, նշում են, որ դա ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը: Մոտիվացիան մարդու վրա ազդելու գործընթաց է՝ որոշակի դրդապատճառների ակտիվացման միջոցով նրան որոշակի գործողությունների դրդելու համար: Այսինքն, մոտիվացիան խթան է, որը մեզ ստիպում է գործել: Կրթական մոտիվացիայի ձևավորումը կարելի է համարել կրթության կենտրոնական խնդիրներց մեկը: Այս թեմայի արդիականությունը կապված է ժամանակակից դպրոցում կրթության բովանդակության թարմացման հետ: Թեմայի կարևորությունը նրանում է, որ ժամանակակից աշխարհում փոխվում են ոչ միայն չափանիշներն ու պահանջները, այլև հենց իրենք՝ երեխաները:

Առաջին դասարան գնալուց երեխան շատ առումներով տարբերվում է իր հասակակիցներից մոտ քսան տարի առաջ: Վերջին տարիներին աշակերտների մոտ նվազում է սովորելու մոտիվացիայի ցանկությունը: Սա նշանակում է, որ պետք է հասկանալ, թե ո±րն է մոտիվացիան, ինչու± է դպրոցականների մոտ նվազում, ինչպե±ս պետք է ձևավորվի և գործի մոտիվացիան, և ի±նչ կարելի է անել, որպեսզի երեխան սկսի հաճույք զգալ ուսումնական գործընթացից: Յուրաքանչյուր ուսուցիչ, ելնելով իր փորձառուէությունից, գտնում է մեկ կամ մի քանի ռազմավարություն և համապատասխանեցնելով դրանք իր առարկային և աշակերտներին՝ տալիս է այս հարցերի լուծումը:

Ես ենթադրում եմ, որ այդպիսի ռազմավարություններից մեկը հարցերի միջոցով մոտիվացիայի ձևավորումն է: Հետազոտության այս հատվածում կփորձենք ուսումնասիրել գիտամանկավարժական գրականություն, որոնք վերաբերվում են հարցադրումների մեթոդին և մոտիվացիային: Ջեֆ Փեթթի «Դասավանդումն այսօր» Գլուխ 14, «Հարցադրումների մեթոդի առավելությունները», «Ջեֆ Փեթթի», Գլուխ 5, «Մոտիվացիա» հետազոտական աշխատանքները, «Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը» Ղուկասյան Ասյայի հոդվածը, «Հարցադրման մեթոդ, Հեղինակ՝ Բաբերցյան Լարիսա» հոդվածը: Ուսումնասիրված աշխատանքներից առանձնացրել եմ մտքեր և հատվածներ, որոնք ինձ կօգնեն իմ հետազոտական աշխատանքը ճիշտ և նպատակային դարձնել: Գրի եմ առել մի քանիսը: Երբ հարցադրումները կիրառում ենք որպես դասավանդման մեթոդ, ի հայտ է գալիս մեկ էական առավելություն: Աշակերտները պետք է իմանան, որ ուսումնառության մեջ հաջողություն են գրանցում: Ոչինչ այնքան չի մոտիվացնում, որքան աշակերտի բավարարվածության զգացումը, երբ նա հարցին ճիշտ է պատասխանում և անմիջապես արժանանում ուսուցչի ջերմ գովասանքին:

Հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝

- ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա,
- ստեղծում է փոխանցելի գիտելիք,
- տալիս է ակնթարթային հետադարձ կապ /թե՞ ուսուցիչներին, թե՞ աշակերտներին/ սովորելու գործընթացի վերաբերյալ,
- դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին,
- աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է,
- աշակերտներին թույլ է տալիս գործնականում կիրառել ուսուցչի հաղորդած և իրենց կողմից վերջերս յուրացված գաղափարները ու բառապաշարները,
- վեր է հանում սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց /այսինքն ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը/,
- մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում,
- անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը,
- կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար,
- թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը,
- խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը,

Ունի նաև թերություններ, այն է՝

- կարող է ժամանակատար լինել,
- դժվարացնում է խմբում բոլոր աշակերտների ներգրավվածությունը,
- հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար /5, Ջ.Փ.Գ.14/:

Ըստ Ֆ.Գրոյսերի /1964/ հարցերը պետք է լինեն հասկանալի, բովանդակալից, հակիրճ, բնական ու պարզ լեզվով շարադրված, մտածելու տեղիք տվող և ներգրավող, «փաստային» և մտածել ստիպող հարցերի միջև հավասարակշռություն պետք է լինի:

Երեխաների մասնակցությունը և ներգրավումն ապահովելու, նրանց մտածողության խթանման և սովորելու հմտությունների զարգացման համար չափազանց կարևոր դեր ունեն առաջադրվող հարցերն ու հարցադրումները: Հարցերը կամ հարցադրումները երեխաների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են:

Հարցերը պետք է լինեն՝

- հստակ
- նպատակաուղղված
- հակիրճ
- երեխաների մակարդակին համապատասխան
- տրամաբանական հաջորդականությամբ
- մտածելու տեղիք տվող /Ա.Ղ., 165/:

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասակարգվում են հետևյալ կերպ.

- բաց
- փակ
- հուշող
- ենթատեքստով
- հետադարձ
- ուղղորդող /Բ.Լ., 2/

Ուսուցիչը պետք է՝

- համոզվի, որ երեխաները հասկացել են հարցը,
- հարցը ձևակերպի հակիրճ,
- հարցը ձևակերպի հստակ,
- կշռադատի հարցի բարդությունը և երեխաներից պատասխաններ ստանալու հնարավորությունը,
- չպետք է տա անորոշ հարցեր,
- չպետք է ուղղորդի երեխաներին դեպի իր նախընտրած պատասխանը,
- չպետք է պատասխանի հարցերին /Վ.Լ.4/:

Քանի որ իմ նպատակն է Հարցադրման մեթոդով ձևավորևել մոտիվացիա, անդրադարձել եմ նաև մոտիվացիային վերաբերող հատվածներին:

Շարժառիթները կարող են լինել երկարաժամկետ կամ կարճաժամկետ: Ընդհանուր առմամբ կարճաժամկետ շարժառիթներն ազդեցիկ են առավել երիտասարդ սովորողների համար, մեծահասակը հաճույքով կաղնու ծառ կարող է տնկել, սակայն 16 տարեկանների համբերությունը չի հերիքում անգամ կանաչի աճեցնելու համար /Ջ.Փ., Գ. 5,4/:

Գովեստը կամ խրախուսումը, որին արժանանում են հաջողության գործընթացի շարժիչ ուժն է: Հետևաբար՝

- Ուսուցիչները պետք է համոզվեն, որ սովորողները հստակ գիտեն՝ ինչ է իրենցից սպասվում և ինչպես անել դա: Նրանք գիտեն նաև, որ անհրաժեշտության դեպքում կարող են օգնություն ստանալ:
- Որոշ առաջադրանքներ պետք է լինեն պարզ, որոշ շտկումներից հետո արագ իրագործելի, որպեսզի բոլոր սովորողները կարողանան որոշակի հաջողության հասնել: Իսկ մյուս առաջադրանքները կարող են ավելի աշխատատար լինել:
- Ուսումնառության մեջ գրանցված հաջողություններն անպայման գովեստի խոսքերի կամ այլ հավանության պետք է արժանացնել՝ չանտեսելով անգամ ամենասովորական հաջողությունը, օրինակ՝ առաջադրանքը քիչ թե շատ հաջող կերպով ավարտելը:

Խրախուսումը չպետք է իրեն սպասել տա: Վերոնշյալ երեք կետերը հիմնաքարային են մոտիվացիայի համար: Դրանք իսկապես շատ լուրջ քննության են արժանի: Զգուշացեք բավարարվածության զգացումից առաջացած թակարդից: Եթե առավելագույն հաջողության հասնելու հնարավորություն տալիս եք ձեր աշակերտների մեծամասնությանը, հաջողությունը պետք է սովորական լինի բոլոր սովորողների համար, հակառասկ դեպքում ոմանք կկորցնեն սեփական ուժերի հանդեպ հավատը, րի շնորհիվ իրականանում է ուսումնառությունը:

Սովորում և հաջողության հասնում են նրանք, ովքեր հավատում են իրենց ուժերին /Ջ.Փ., Գ. 5,8/:

Յուրաքանչյուր ուսուցիչ, ելնելով իր փորձառությունից, գտնում է մեկ կամ մի քանի ռազմավարություն և համատասխանեցնելով դրանք իր առարկային և աշակերտներին՝ տալիս է այս հարցերի լուծումը: Սակայն միայն մեթոդի ընտրությամբ կամ ռազմավարությամբ չի լուծվում ուսումնառության արդյունավետության ապահովման խնդիրը: Այդ ամենի մեջ անփոփոխ է մնում մոտիվացիան, որն արդյունավետ ուսումնառության առաջին նախապայմանն է: Հոգեբաններն առանձնացնում են խրախուսման երկու հիմնական տեսակ՝ ներքին և արտաքին:

Ներքին մոտիվացիայի դեպքում անհատի խրապուսման շարժառիթները բխում են ներսինց՝ կապված իր սեփական հետաքրքրությունների և ցանկությունների հետ: Ներքին դրդապատճառները ներառում են սեփական զարգացում ուսուցման գործընթացում: Անհրաժեշտ է, որ սովորողն ինքը ցանկանա ինչ-որ բան անել:

Արտաքին դրդապատճառներըգալիս են ծնողներից, ուսուցիչներից, այն խմբից, որում սովորում է աշակերտը, միջավայրից կամ հասարակությունից: Այսինքն՝ այս ուսումնասիրությունը պարտադրված վարքագիծ է և հաճախ հանդիպում է աշակերտների ներքին դիմադրությանը: Հետևաբար, առավելությունը պետք է տրվի ներիքն խթանիչ ուժերին: Սովորելու լավագույն մոտիվացիան դա սերն ու հետաքրքրությունն է: Սովորողը պետք է հասկանա, որ դպրոցում ձեռք բերած գիտելիքն իրեն օգտակար է լինելու ապագայում: Հետևաբար, ուսուցիչը պետք է կարողանա ապացուցել սովորողներին, որ իր առարկան, իսկապես, օգտակար կլինի նրանց համար: Սովորողը պետք է ոչ միայն հետաքրքրված լինի առարկայով, այլև կարողանա ձեռք բերած գիտելիքը գործնականում կիրառել:

Եթե աշակերտը հասկանում է, որ կարող է խորհուրդներ և օգնություն ստանալ, ուսուցչի հետ քննարկել առարկայի վերաբերյալ հարցեր, ուսումնասիրել, ապա նրան ավելի է հետաքրքրում առարկայի ամբողջական ուսումնասիրությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ժամանակակից գլոբալացված աշխարհում և համավարակի առկայությամբ կիթական արդյունավետ գործընթացը պահանջում է, որ ուսուցիչը որդեգրի կառուցողական մոտեցում և կիրառի դասավանդման արդյունավետ մեթոդներ:

Մինչև հետազոտական գործընթացը սկսելն ինձ համար առանձնացրել եմ որոշակի խնդիրներ՝ հետազոտական խնդիրներ.

- մոտիվացիայի խթանումն ու զարգացումը դասին,
- աշակերտների ներգրավվածության ապահովումը դասին,
- հետաքրքրասիրության բարձրացումն առարկայի նկատմամբ,
- աշակերտների ուշադրության կենտրոնացումը դասին,
- վերլուծականության զարգացումը դասին

Վերոնշյալ խնդիրներից առաջնահերթ եմ համարում մոտիվացիայի խթանումն ու զարգացումը դասին, որի լուծման դեպքում դասարանում կունենամ ուսուցման և դաստիարակության գործընթացում շոշափելի դրական արդյունք: Ուսումնասիրել եմ մի շարք հետազոտողների և մանկավարժների աշխատանքներ, որոնք առանձնանում են գիտական գրականության մեջ և որոնց կարծիքով լրացուցիչ ընմթերցանությունը լավ ծրագրված և կանխամտածված հետազոտական մոդել է, որի հաջող իրականացման հետևանքով կձևավորվի մոտիվացիա:

Մոտիվացիան հսկայական դրական էներգիա է ծնում, որը օգնում է հասնել նպատակին:

Դրական ուսումնական մոտիվացիա ստեղծելու, զարգացնելու հարցում մեծ է ուսումնական հաստատության գործունեության դերը, ուսուցչի կիրառած մանկավարժական մեթոդները, ուսուցչի խոսքի հուզականությունը, դասարանումտիրող առողջ մթնոլորտը, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները և այլն: Այսպիոսով երեխայի ուսումնական գործունեությունը խթանում է ոչ թե մեկ դրդապատճառով, այլ միահյուսված, փոխլրացնող, միմյանց հետ որոշակի հարաբերությունների մեջ գտնվող զանազան շարժառիթների մի ամբողջ համակարգ:

Վերջին տարիներին տարրական դասարանների ուսուցիչների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել և որոնել ուսուցման իդեալական տարբերակ: Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները:

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամերի կազմակերպումը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հարցադրման մեթոդի միջոցով աշակերտների մոտ մոտիվացիայի ձևավորման արդյունավետությունը:

Դասերի ժամանակ՝ որոշակի փուլում, հարց-պատասխանի բոլոր ռազմավարություններն էլ կարող են տեղի ունենալ: Հարցադրումներ կարող են կիրառվել նաև անցած թեմաները վերհիշելու և վերանայելու համար:

Համաձայն առաջադրված հետազոտության նպատակի և խնդիրների՝ կազմել եմ ուսումնասիրության ռազմավարություն: Տեսական վերլուծության վրա հիմնվելով օգտագործել եմ հարցադրումների մեթոդը և հայտորոշիչ թեստեր, որպես հետազոտության հիմնական գործիքներ:

Նպատակս է աշակերտների մոտ ձևավորել կարճաժամկետ մոտիվացիա, որպեսզի ուսուցանվող նյութը ճիշտ և հեշտ յուրացվի:

Հետազոտության համար ընտրել եմ իմ դասավանդած երրորդ դասարանը, որտեղ սովորում են 24 աշակերտներ, որոնցից մեկը ԿԱՊԿՈՒ աշակերտ է: Հետազոտությունը անցկացերել եմ երկու դասաժամերի ընթացքում: Նախատեսել եմ առաջին դասաժամի ընթացքում նոր դասը հաղորդել պատմելու միջոցով, իսկ Անդրադարձ փուլում բաժանել եմ հայտորոշիչ թեստեր և ստուգել աշակերտների կողմից դասանյութի յուրացվածության աստիճանը:

Առաջին դաս

1. Ի՞նչ է խաղողը:
2. Ինչե՞ր են պատրաստում խաղողից:
3. Ինչի՞ խորհրդանիշ է խաղողը:
4. Ի՞նչ բուժիչ հատկություններ ունի խաղողը:
5. Քանի՞ տարի կարող է ապրել խաղողենին և ի՞նչ պայմաններում է աճում:

Երկրորդ դասաժամի ընթացքում նոր դասը հաղորդել եմ՝ կիրառելով Հարցադրման մեթոդը: Հարցադրումը կատարել եմ ելնելով աշակերտների առօրյա գիտելիքներից:

Հարցերը տրվել է պարզից բարդ սկզբունքով: Սխալ պատասխանները չեմ ուղղել, այլ հարցադրումները փոխել եմ, որպեսզի աշակերտները գտնեն ճիշտ պատասխանը: Դասի անդրադարձ փուլում հանձնարարել եմ հայտորոշիչ թեստեր և ստուգել յուրացրած գիտելիքների մակարդակը:

Երկրորդ դաս

1. Ի՞նչ է նուռը:
2. Ի՞նչ են պատրաստում նռից:
3. Ի՞նչ բուժիչ հատկություններ ունի նուռը:
4. Ի՞նչ պայմաններում է աճում նռենին:
5. Ինչի՞ խորհրդանիշ է նուռը:

Թեստերի արդյունքները ստուգել և գրանցել եմ նախապես կազմած աղյուսակներում: Վերջում համեմատել եմ աղյուսակները և կազմել դիագրամ, որտեղ արտացոլվել է մոտիվացիայի ձևավորման աստիճանը ըստ կիրառած մեթոդների և աշակերտների տված պատասխանների:

Վերլուծելով արդյունքները ունեցել եմ աշակերտների դասի մոտիվացման և պատրաստվածության, ինչպես նաև ակտիվության սկզբնական և վերջնական պատկերը: Հետո իրականացրել եմ հետազոտման փորձարկման դասը, որի ժամանակ նույն չափիչ գործիքների միջոցով հավաքագրել եմ տվյալները՝ վերլուծելու նպատակով և ընդհանուր արդյունքների ամփոփում եմ կատարել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Եթե դու կարող ես մի բան պատկերացնել, ուրեմն դու կարող ես դրան հասնել: Մոտիվացիան թե հմուտ, թե սկսնակ ուսուցիչների կողմից ընկալվում է իբրև արդյունավետ ուսումնառության նախապայման և շատ ուսուցիչների համար մեծագույն մարտահրավեր է սովորողների մեջ սովորելու ցանկություն սերմանելը: Եթե սովորողները չցանկանան սովորել, նրանց ուսումնառության արդյունավետությունն այնքան ցածր կլինի, որ հնարավոր է նրանք ոչինչ էլ չսովորեն: Եթե գիտենք՝ ինչպես կարող ենք մոտիվացնել սովորողների, մենք կարող ենք հսկայական թափ հաղորդել նրանց սովորելու գործընթացին:

Մոտիվացիայի նպատակը – երեխաների մոտ առաջացնել հետաքրքրություն որևէ գործունեության նկատմամբ, պայմաններ ստեղծել ոգևորությամբ ուղղորդել երեխաների ջանքերը գիտակցաբար տիրապետելու և ձեռք բերելու գիտելիքներ և հմտություններ:

Մոտիվացիան թույլ է տալիս միանգամից մի քանի խնդիր լուծել:

- ընդլայնել և հարստացնել հարցադրման հմտությունների և կարողությունների շրջանակը,
- ակտիվացնել ընկալման, ուշադրության, հիշողության, մտածողության գործընթացները,
- սահուն կերպով կարգավորել երեխաների վարքային դժվարությունները՝ աստիճանաբար նրանց սովորեցնել ենթարկվել դասապրոցեսին,
- խթանել ճանաչողական գործունեությունը և երեխաների հարցեր տալու կարողությունները:

Դասերը սովորելիս, ինչպես կարելի է պահել երեխայի ուշադրությունը՝

- նոր իմաստ տալ ձանձրալի առաջադրանքներին,
- խթանել ներքին մոտիվացիան,
- փոխել դերերը՝ աշակերտ «ուսուցչի» փոխարեն,
- սովորեցնել նրան ճիշտ հարցադրումներ կատարել:

Հետազոտությունն իրականացրել եմ 3-րդ դասարանի մայրենիի դասին և որպես խնդիր դիտարկել եմ մոտիվացիայի խթանումն ու զարգացումը հարցադրումների միջոցով:

Իմ առջև խնդիր դրեցի ուսումնասիրվող թեման ներկայացնել առաջին դասի ժամանակ, միայն պատմելու միջոցով: Մի քանի հարցերի միջոցով առաջարկել եմ գուշակել նոր դասի թեման: «Մտագրոհի» միջոցով ուղղորդել եմ, որ գտնեն ճիշտ պատասխանը: Այսպես, երեխաները հետաքրքրությամբ կսպասեն նոր թեմայի ուսուցմանը, որ «գաղտնիքը» բացահայտեն:

Դասի առաջին փուլում պատմել եմ խաղողի մասին, այնուհետև կարդացել եմ դասը, բացատրել նորածանոթ բառերն ու արտահայտությունները: Անդրադարձ փուլում հանձնարարել եմ հայտորոշիչ թեստ:

- Ի՞նչ է խաղողը:
- Ինչե՞ր են պատրաստում խաղողից:
- Ինչի՞ խորհրդանիշ է խաղողը:
- Ի՞նչ բուժիչ հատկություններ ունի խաղողը:
- Քանի՞ տարի կարող է ապրել խաղողենին և ի՞նչ պայմաններում է աճում:

ԿԱՊԿՈՒ աշակերտի համար կազմել եմ առանձին թեստ:

1. Պատկերված նկարներից գտի՞ր խաղողի նկարը և ներկի՞ր:



2. Ի՞նչ ենք ստանում խաղողից՝

- գինի, չիր, քացախ
- ճաշ
- չգիտեմ

3. Ի՞նչ է խաղողը

- միրգ
- բանջարեղեն
- չգիտեմ

Հաշվի առնելով այն փաստը, որ շարժառիթները կարող են լինել երկարաժամկետ կամ կարճաժամկետ, փորձել եմ երկրորդ դասի ժամանակ ձևավորել կարճաժամկետ մոտիվացիա՝ ուսուցանվող նյութը լավ յուրացնելու համար: Դասի «Իմաստի ընկալման» փուլում կիրառել եմ «Հարցադրումների մեթոդը»: Քանի որ գյուղում ենք ապրում, երեխաները տեղյակ են նռնենու մշակման տեխնիկային և մասնակցել են բերքահավաքին: Իմ հարցադրումները կապել եմ իրենց առօրյային, որպեսզի ավելի մոտիվացնեմ: Ցուցադրելով նուռը՝ կատարել եմ հարցադրումներ: Քանի որ աշակերտները ծանոթ էին մրգին, գիտեին պատասխանը, միանգամից ակտիվացան: Առաջարկեցի հաջորդ հարցը՝

Նուռը մի՞րգ է, թե հատապտուղ:

Ի՞նչ կարող ենք ստանալ նռից:

Հիշեցին, որ տատիկներն ու մայրիկները ինչեր են պատրաստում նռից:

Նորից հիշեցինք, թե ինչեր էին պատրաստում խաղողից: Համեմատեցին, հիշեցին, որ խաղողի վազերի հետ միասին հողով ծածկում են նաև նռնենին, որպեսզի չցրտահարվի: Թե ի՞նչ պայմաններում են սիրում աճել հարցին պատասխանը ճիշը և հեշտ գտան:

Հարցադրման մեթոդի կիրառումից հետո ընթերցել եմ դասը: Համեմատել ենք աշակերտների տրված պատասխանները և դասանյութում ներկայացված տեղեկությունները: Առանձնացրել ենք այն տողերը, որոնք նոր տեղեկություններ են

տրամադրել նռան մասին /ամենաուշն է ծաղկում /մայիս-օգոստոսին/, պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբերին, ջերմասեր է և լուսասեր և այլն:

Անդրադարձ փուլում Հայտորոշիչ թեստ եմ տվել և ստուգել յուրացրած գիտելիքների մակարդակը:

1. Ի՞նչ է նուռը:
2. Ի՞նչ են պատրաստում նռից:
3. Ի՞նչ բուժիչ հատկություններ ունի նուռը:
4. Ի՞նչ պայմաններում է աճում նռենին:
5. Ինչի՞ խորհրդանիշ է նուռը:

ԿԱՊԿՈՒ աշակերտի համար կազմել եմ առանձին թեստ.

1. Պատկերված նկարներից գտի՞ր նկարը և ներկի՞ր նուռը:



2. Ի՞նչ է նուռը

- միրգ
- բանջարեղեն
- չգիտեմ

3. Ի՞նչ ենք ստանում նռից՝

- գինի, հյութ
- չիր
- չգիտեմ

Երկրորդ դասի համար կազմել եմ հարցադրումների ստուգացանկ.

- տալ այնպիսի հարցեր, որոնց պատասխանները աշակերտները հաջողությամբ և հեշտ կգտնեն,
- հարցերը ձևակերպել հակիրճ ու հասկանալի,
- աշակերտներին տալ մտածելու ժամանակ,
- միշտ շնորհակալություն հայտնել, գովեստի արժանացնել թեկուզ փոքր պատասխանների համար:

Երկրորդ դասի ժամանակ, երբ առաջադրվեցին հարցերը, պասիվ երեխաների մոտ ակտիվություն էր նկատվում: Թեև նրանց պատասխանները կցկտուր էին, թերի, բայց նրանք փորձել էին աշխատել: Նրանք նույնպես գովեստի արժանացել են: Պասիվ աշակերտների մոտ Հարցադրման մեթոդի կիրառման ժամանակ դրական մոտիվացիա նկատվեց: Նրանց մոտ նկատվում էր ոգևորություն, ուշադրության կենտրոնացում, մեկը մյուսին օգնելու ցանկություն: Նրանք իրենց կարողությունների

և հմտությունների սահմանում պատասխանում էին տրված հարցերին: Երկրորդ դասի ժամանակ պասիվ աշակերտները նախորդ դասի համեմատ բավական առաջընթաց ունեին: Դրական մոտիվացիայի արդյունքում նրանք կարողացան որոշակի արդյունքի հասնել:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամեր կազմակերպել: Հետևաբար կրտսեր դպրոցականի ուսուցման հաջողության գրավականը կայուն ուսումնական մոտիվացիայի առկայությունն է: Հիմնվելով այս հանգամանքի վրա՝ անցկացրել եմ հետազոտություն 2 դասաժամերի ընթացքում:

Առաջին դասաժամին չեմ կիրառել մոտիվացնող ոչ մի մեթոդ: Դասի վերջում տվել եմ Հայտորոշիչ թեստ, ստուգել եմ արդյունքները: Երկրորդ դասի ընթացքում կիրառել եմ Հարցադրումների մեթոդը: Անդրադարձ փուլում նորից հանձնարարել եմ գրել Հայտորոշիչ թեստ: Համեմատել եմ երկու դասերի արդյունքները և հանգել եզրակացության, որ բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար ունակությունների ժամանակ, սակայն հակառակ ուղղությամբ այս սկզբունքը չի աշխատի, քանի որ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը և ապահովել ուսուցման էական առաջընթաց:

Կարևորն այն է, որ պասիվ աշակերտները հասկացան, որ իրենք էլ կարող են կատարել իրենց առջև դրված խնդիրը: Առաջադրանքներ կատարելիս դժվարությունների միշտ էլ կհանդիպեն, պարզապես պետք է լինեն աշխատասեր ու մի քիչ էլ ջանք թափեն և ոչ թե նահանջեն: Հարցադրումների մեթոդով առզմավարությունը օգնեց գնահատելու սովորողների ուսումնառության հնարավորությունները:

Հարցադրումներով ուսուցման միջոցով կարելի է մոտիվացնել և բարձրացնել սովորողների առաջադիմությունը:

Առաջին դասին աշակերտների ակտիվությունը



Երկրորդ դասին աշակերտների ակտիվությունը



Համեմատելով գրաֆիկները՝ պարզ երևում է երկրորդ դասի ժամանակ մոտիվացիայի առկայությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արեք այնպես, որ ստանաք այն, ինչ ցանկանում եք, հակառակ դեպքում ստիպված կլինեք սիրել այն, ինչ ունեք:

Բեռնար Շոու

Այսպիսով ժամանակակից հասարակությանը անհրաժեշտ է անձ, որն ունակ է ինքնակատարելագործման, ինքնազարգացման: Հասարակության այս կարիքը չի կարող բավարարվել տարբեր առարկաների ուսումնասիրության ընթացքում դպրոցականների շրջանում մտավոր և ճանաչողական մոտիվացիայի բացակայությամբ, հետևաբար աշակերտների մոտիվացիայի ձևավորման խնդիրը ներկայումս ամենաարդիականն է մանկավարժական տեսության և պրակկտիկայի մեջ: Ուսումնական շարժառիթը երբեք չի կարելի մեկնաբանել որպես սովորողների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի դպրոցականների մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին: Աշակերտների մտածելակերպում և վարքագծում նկատվող դրական տեղաշարժերը թույլ են տալիս պնդելու, որ դասավանդման ժամանակակից մեթոդներն ու մոտեցումները արդյունավետ կիրառելիս կխթանվի մոտիվացիան: Իմ կողմից կատարած տեսական ուումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացությունների:

- Տարրական դասարաններում առաջնային համարել ուսուցանվող նյութի նկատմամբ կարճաժամկետ մոտիվացիայի ձևավորումը:
- Այն դասաժամերը, որոնց ընթացքում աշակերտի մոտ ձևավորվում է մոտիվացիա ուսուցանվող նյութի նկատմամբ, աշակերտները հաճույքով են մասնակցում և մեծ ակտիվություն ցուցաբերում:
- Յուրաքանչյուր մեթոդ ունի իր բնորոշ առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին կարող են մոտիվացնել աշակերտներին:
- Հարցադրումների մեթոդի ճիշտ կիրառման դեպքում կարող է աշակերտների մոտ ձևավորվել մոտիվացիա:
- Նպատակային աշխատելը և փոքր ձեռքբերումները նշելը կօգնեն մեզ մոտիվացիան պահպանել:
- Հաջողությունից օգտվելիս մեր մոտիվացիան կաճի, և մենք կարող ենք ոչ միայն հասնել նպատակներին, այլև գերազանցել դրանք:

Ուսումնական մոտիվացիայի ձևավորումից է կախված ուսուցման գործընթացում մեր և աշակերտների ունեցած հաջողությունը:

Հարցադրումների մեթոդն ունի գերագույն կարևորություն: Այն ստիպում է աշակերտներին ինքնուրույն մտածել և ստեղծում է բարձրորակ փոխանցելի գիտելիք: Այն թույլ է տալիս աշակերտներին կիրառել իրենց ուսուցանվող հասկացություններն ու սկզբունքները, իսկ ուսուցիչներին հնարավորություն է տալիս այս կիրառությունը ստուգել և շտկել: Հարցադրումների շնորհիվ ստանում են նաև հետադարձ կապ ուսումնառության գործընթացի վերաբերյալ: Աշակերտների համար հարցադրումներով զրույցը հետաքրքիր և հաճելի գործընթաց է, քանի որ ճիշտ պատասխանները նրանց վստահության և հաջողության զգացողություն են պարգևում: Նույնիսկ այն աշակերտները, որոնք անձամբ չեն պատասխանում, բայց ինքնուրույն գտնում են ճիշտ պատասխանը, վստահություն են ձեռք բերում: Այս վստահությունն ու հաջողությունը, գովասանքի ու հավանության ուղեկցությամբ, մոտիվացիայի առաջ մղման պատճառ են հանդիսանում:

Ճիշտ պլանավորումը, աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը, դրական օրինակների մատնանշումը, ժամանակի կառավարումը, ավանդական և ժամանակակից մեթոդների պատճառաբանված կիրառումը կնպաստեն ինչպես մոտիվացիայի բարձրացմանը, այնպես էլ ուսման որակի և առաջադիմության բարելավմանը: Իսկ այս ամենն անելու համար մեծ **ՍԵՐ, ՆՎԻՐՈՒՄ և ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ** է պահանջվում:

Մոտիվացված ուսուցիչը կրթում և դաստիարակում է մոտիվացված աշակերտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջեֆ Փեթթի «Դասավանդումն այսօր», Գլուխ 14, «Հարցադրումների մեթոդի առավելությունները» հետազոտական աշխատանք:
2. Ջեֆ Փեթթի, Գլուխ 5, «Մոտիվացիա» հետազոտական աշխատանք:
3. Ильин Е.П. Мотивация и Мотивы – ЦПБ., Питер, 2002-512с, страница 65.
4. Маслоу Н.Х. Мотивация и личность. Мастера психологии – Питер, 2014-350с.
5. «Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը» Ղուկասյան Ասյա, հոդված:
6. https://lib.armedu.am/Հարցադրման մեթոդ, Բաբերցյան Լարիսա: